

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Հրացավ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի ծննդյան 75-ամյակը:



Ս. Գ. Աբրահամյանը ծնվել է 1925 թ. փետրվարի 14-ին, Լեոնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Տումի գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո մեկնել է ռազմաճակատ: 1944 թ. ծանր վիրավորվել է և զորացրվել: 1945 թ. նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ավարտել 1950 թ.: Նույն թվականին ընդունվել է ասպիրանտուրա՝ ժամանակակից Հայոց լեզու մասնագիտությամբ: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, 1966 թ.՝ դոկտորական գիտությունների:

Դեռևս ուսանողական տարիներից շփվելով ու աշակերտելով Հայ և համաշխարհային գիտական մտքի այնպիսի փայլուն ներկայացուցիչների, ինչպիսիք էին Արս. Տերտերյանը, Գր. Ղափանցյանը, Հր. Աճառ-

յանը, Գ. Սևակը, Ս. Աբրահամյանը ստեղծագործաբար յուրացնում է նրանց լավագույն ավանդույթները և երախտապարտ աշակերտի խորին ակնածանքով ու պատվով շարունակում ու զարգացնում է ավագների գործը: 1960-ական թվականների կեսերից սկսած՝ նա դառնում է Հայ լեզվաբանական մտքի կենտրոնական դեմքերից մեկը: Եվ այսօր էլ մնում է այդպիսին:

Անչափ լայն են Ս. Գ. Աբրահամյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Նրան զբաղեցրել և զբաղեցնում են ժամանակակից Հայերենի բոլոր բաժինները, բայց առավելապես՝ բառագիտությունը, ձևաբանությունը, շարահյուսությունը, ոճաբանությունը:

Լեզվաբանին խորթ չեն Հայոց ավանդական քերականությունը հատուկ հետազոտական մեթոդները, եղանակներն ու Հայեցակարգերը, սակայն նա չի բավարարվում սոսկ ազգային ավանդների յուրացմամբ ու զարգացումով: Առաջիններից մեկը լինելով մեզանում՝ նա համաշխարհա-

յին լեզվաբանական մտքի նոր ու նորագույն նվաճումների լույսի տակ է դիտարկում հայոց լեզվի կնճռոտ, ցարդ վիճելի շատ իրողութուններ, իր հետազոտութունները կառուցում վերլուծական արգի եղանակների ու ձևերի՝ ժամանակի քննութունը բռնած ամենաառաջագեմ հայացքների ու ելակետային սկզբունքների համադրական հիմքի վրա:

Իր բուն խառնվածքով Ս. Աբրահամյանը պրպտող ու որոնող հեղինակ է: Բայց պրպտումն ու որոնումը ինքնին ոչինչ են, եթե չկա դրանց արդյունքը՝ որոնածի հայտնաբերումը: Որոնելը գտնելով է գեղեցկանում: Եվ ի պատիվ հեղինակի պետք է ասել, որ նրա որոնումները անխտիր պսակվում են դտածով, նոր խոսքով, լեզվական իրողութունների ու օրինաչափութունների նորովի դիտարկումներով ու բնութագրումներով: Այսպես՝ տակավին 1956 թ. հրատարակված «Արդի հայերենի գերանունները» մենագրության մեջ նա վիճարկում է հայերենի գերանունների ավանդական ըմբռնումն ու դասակարգումը: Դերանվան խոսքի մասի մեջ ամփոփված բոլոր բառական միավորների իմաստային, կառուցվածքային, ձևակազմական ու կիրառական հատկանիշների համադրական վերլուծությամբ նա առաջադրում է դրանց գասակարգման նոր սկզբունքներ, որոնք վերաբերում են այդ խոսքի մասի թե՛ քանակական հատկանշին, թե՛ որակական բնութագրումներին: Այժմ հայերենի խոսքի մասերի վերաբերյալ չի կարող կատարվել որևէ հետազոտութուն՝ առանց հաշվի առնելու Ս. Աբրահամյանի գասակարգման հիմքում ընկած սկզբունքները:

Նույնքան ուշադրավ են նրա ուսումնասիրութունները հայերենի նաև մյուս խոսքի մասերի դասգասման, ճանաչման, բառաքերականական հատկանիշների առանձնացման ու սահմանման մարզում:

Չթեքվող խոսքի մասերը, աշխարհաբարի ձևավորման ժամանակներից իսկ սկսած, մշտապես զբաղեցրել են հայ քերականների միտքը: Վեճերն ու տարակարծութունները շարունակվել են մինչև մեր օրերը: Այս վիճահարույց խնդրին անգրագաբձել է և Ս. Աբրահամյանը իր մի շարք աշխատութուններում, սակայն առավել հանգամանորեն և հիմնավոր քննության է ենթարկել դրանք մասնավորապես՝ «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերութունները ժամանակակից հայերենում» (Երևան, 1965) աշխատասիրության մեջ: Աս նշված հիմնահարցի ուսումնասիրությանը նվիրված, հայագիտության մեջ երբևէ կատարված աշխատանքների թագն ու պսակն է: Այստեղ նախ և առաջ ճշտված են հայերենի խոսքի մասերի դասակարգման բուն իսկ հիմունքները: Խոսքի մասերի համակարգը նա դիտում է ոչ թե որպես նույն բնույթի և նույն մակարդակի, այլ որպես տարաբնույթ ու տարասեռ հակադրութունների մի ամբողջութուն: Այդ իսկ պատճառով բառերը ըստ խոսքի մասերի բաժանելիս նա կիրառում է տարաստիճան դասակարգման սկզբունքը: Այսպիսի դասակարգմամբ նա վերջնականապես ճշտում է թե՛ խոսքի մասերի ամբողջ համակարգի դիտական ու վերջնական պատկերը, թե՛ յուրաքանչյուր խոսքի մասի ենթահամակարգի (միկրոհամակարգի) էութունը և տեղը ընդհանուր ամբողջության մեջ, խոսքի մասերի ընդհանուր համակարգում:

Ըստ որում չի կարելի չըջանցել հայերենի չթեքվող խոսքի մասերին առնչվող ևս մի խնդիր, որ մինչև հիշյալ աշխատության հրատարակումը նմանապես մնում էր չլուծված: Խոսքը եղանակավորող կոչված բառերի մասին է: Դեռևս Մ. Աբեղյանը այս բառերը մյուս սպասարկու բառերից, իր արտահայտությունները՝ «խոսքի մասնիկներից» առանձնացրել էր՝ որպես առանձին խումբ: Սակայն մինչև 1950-ական թվականների վերջերը դրանք «թափառում էին» մասամբ մակրայների (անշուշտ, անպայման և այլն), մասամբ՝ ձայնարկությունների (դե՛, ա՛խըր և այլն), մասամբ՝ շաղկապների [ասես (թե), կարծես (թե) և այլն] կամ միաժամանակ երկուսի միջև և որոշակիորեն համակարգված չէին: Ս. Աբրահամյանը այս բառերը ուսումնասիրեց առավել հանգամանորեն՝ ըստ կազմության, ըստ իմաստի, ըստ կիրառական հատկությունների, ըստ խոսքի մասերի համակարգում գրաված դիրքի՝ նա համալրեց դրանց կազմը և առաջին անգամ արժանի տեղ հատկացրեց հայերենի խոսքի մասերի համակարգում՝ որպես ինքնուրույն՝ տասներորդ խոսքի մասը: Խոսքի մասերի նոր դասակարգումը արտացոլվել է նրա աշխատություններում, դպրոցական և բուհական դասագրքերում ու ձեռնարկներում: Այն վաղուց ընդունվել և անվերապահորեն ճանաչվել է հայ լեզվաբանության մեջ: Ուրեմն, կարելի է ասել, արգի հայերենի տասը խոսքի մասերի համակարգի մշակման ու հաստատման պատիվը պատկանում է արգո լեզվաբանին:

Ս. Աբրահամյանին, սակայն, միայն խոսքի մասերը չեն, որ հետաքրքրել են, որքան էլ որ դրանց ուսումնասիրությունը հիմնարար նշանակություն ունենա հայագիտության համար: Նրան մշտապես զբաղեցրել և զբաղեցնում է հայերենի ողջ քերականությունը՝ իր համակարգային ամբողջության մեջ: 1969 թ. հրատարակված՝ «Ժամանակակից հայերենի քերականությունը» ասվածի վառ վկայությունն է: Շուրջ երեք տասնամյակ սա ուսանողների, ուսուցիչների և ընդհանրապես հայերենի քերականության հարցերով զբաղվողների սեղանի գիրքն է:

Ո՛չ պակաս արժեքավոր երկասիրություն է նաև նրա «Ժամանակակից գրական հայերենը» (Երևան, 1981), որն իր բնույթով եզակի է և միակը հայ իրականության մեջ: Նրանում տրված են մեր լեզվի բոլոր մակարգակների կանոնակարգված համակարգերի դիտական բնութագրերը: Մեր գրական լեզվի կանոնարկման բնագավառում հեղինակի ներդրումը այստեղ հանգում է հետևյալին. ա) նա մշակել և չըջանառության մեջ է գրել գրական լեզվի (հայերենի) կանոնարկման ելակետային սկզբունքները, բ) կազմել է առանձին հարացույցների, համակարգերի ու ենթահամակարգերի կանոնարկմանը վերաբերող նախագծեր, որոնք, որպես որոշումներ, հաստատվել են և չըջանառության մեջ գրվել տերմինաբանական կոմիտեի որոշումներով, գ) հայերենի կետագրության գործող կանոնների կեսից ավելին ինքն է սահմանել կամ վերանայել ու ճշտել: Դրանք բոլորը իրենց հաստատուն տեղն են գրավել դպրոցական և բուհական դասագրքերում ու ձեռնարկներում:

Հայոց լեզվի քերականության դիտական քննության և տեսության մշակման, մասնավորապես շարահյուսական նվազագույն միավորների կապակցության եղանակների, ընդհանրապես շարահյուսական կաղապարնե-

րի առանձնացման ու սահմանման բնագավառում կարևոր ներդրում էր «ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» (Երևան, 1962) մենագրությունը: Հենվելով համաշխարհային լեզվաբանության առաջատար փորձի, այլև սեփական հետազոտություններից ստացված արդյունքների վրա՝ գիտնականը հայոց լեզվի շարահյուսության շատ իրողություններ դիտարկում է նոր հայեցակետով: Հայ քերականագիտության մեջ առաջին անգամ այստեղ են գիտականորեն առանձնացված և հակադրված նախադասության երկու հիմնական տարատեսակները՝ երկկազմ և միակազմ նախադասությունները՝ իրենց կառուցվածքային հատկանիշներով: Հենց այդ երկու գիտաբառերն էլ (տերմինները), ի թիվս շատ այլ դիտաբառերի, կազմված են իր իսկ կողմից և առաջին անգամ շրջանառության մեջ են դրված այդ գրքում: Դրանք արգեն մեր լեզվաբանական տերմինարանության սեփականությունն են: Բացի նշվածից՝ այստեղ նորություն է և հետևյալը. նրա բազմամյա ուսումնասիրության արդյունքում հայերենի շարահյուսական համակարգը համարվել է մի նոր բաժնով, որ հեղինակը կոչել է «նախադասությունների կապակցություն»: Նախադասությունների կապակցությունը թեև առնչվում է խոսքին, բնագրին (տեքստին), սակայն իր կառուցվածքային, տրամաբանական և կասկակական ընդհանուր օրինաչափություններով նաև լեզվական մակարդակի իրակություն է, լեզվական կարգ (կատեգորիա): Գիտական այս նորույթը նույնպես արդեն գտել է համընդհանուր ճանաչում և արձանագրվել համապատասխան աղբյուրներում, դասագրքերում:

1978 թ. Ս. Աբրահամյանը լույս է բնծայում «Հայոց լեզու. բառ և խոսք» գիրքը: Թեև այն հասցեագրված է հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտներին, սակայն նրանում կան նոր ու թարմ ընդհանրացումներ լեզվական այլևայլ իրողությունների, հատկապես բառի և խոսքի ոճաբանության հետ կապված խնդիրների մասին:

Ա. Աբրահամյանը նույնիսկ ամենագրական՝ դասական իմաստով առանձնասենյակային (կարիներտային) գիտնական չէ, սոսկ տեսությունը զբաղվող լեզվաբան, ինչպես ասում են՝ կյանքից կարված չոր տեսաբան: Իր աշխատանքային դործունեության ամենավաղ շրջանից սկսած՝ նա սերտորեն կապված է բուն կյանքի, այս սլարադայում՝ ուսումնական դործընթացի հետ: Նա զանազան բուհերում ավանդել և այժմ էլ ավանդում է արդի հայերենի անխտիր բոլոր բաժիններին վերաբերող տեսական ու գործնական գասընթացներ: 1984 թ. սկսած՝ հայկական գպրոցների 7-8-րդ դասարաններում ավանդվում է Ս. Աբրահամյանի հայոց լեզվի շարահյուսության դասադիրքը՝ շարադրված մեթոդաբանական նորագույն սկզբունքներով, ժամանակակից լեզվաբանական մտքի նվաճումների հենքի վրա, ուսուցման արդիական պահանջներին միանգամայն համապատասխան: Այստեղ նա հետևողականորեն կիրառում է իր իսկ հրապարակած մի կարևոր սկզբունք՝ քերականական նվազագույն գիտելիքներով ապահովել լեզվի գործնական ուսուցումը, որ առավելագույնս նպաստում է աշակերտների կենդանի կամ բանավոր (նաև գրավոր) խոսքի զարգացմանը: Հարկ է ավելացնել և հետևյալը: 1990-ական թվականներից սկսած՝ հանրապետության հանրակրթական դպրոցների 1-8-րդ դասարանների հա-

յերենի բոլոր դասագրքերը անխտիր շարադրվել են Ս. Աբրահամյանի գիտական ղեկավարութամբ՝ նրա մշակած և բարձրագույն ատյաններում հաստատված սկզբունքների հիման վրա:

Նա հեղինակն է նաև բուհական դասագրքերի: Բացի վերը նշված «Ժամանակակից հայերենի քերականությունից», որը վերամշակված ու լրացված կերպով վերահրատարակվեց 1975 թ. և նախատեսված էր իբրև բուհական ձեռնարկ, Ս. Աբրահամյանը գրել է (հեղինակակցութամբ) նաև «Հայոց լեզու, շարահյուսություն» (հ. 2) բուհական դասագիրքը (Երևան, 1975), սփյուռքահայերի համար (դարձյալ հեղինակակցութամբ)՝ «Հայերէն լեզուի դասագիրք» (Երևան, 1966 և 1968 թթ.):

Շուայլորեն օժտված լինելով գիտական ու մանկավարժական ձիրք ու շնորհքով՝ Ս. Աբրահամյանը չէր կարող չներքաշվել ղեկավար ու պատասխանատու գործի մեջ: 1959 թվականից առ այսօր նա անընդմեջ ղեկավարում է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի բաժնի աշխատանքները: Ի շարս հայագիտական այլ գործերի՝ բաժինը Ս. Աբրահամյանի ղեկավարութամբ պատրաստել և հրատարակել է հայոց լեզվի ակադեմիական քերականությունը՝ «Ժամանակակից հայոց լեզու» խորագրով, անչափ արժեքավոր ու մնայուն մի աշխատություն (երեք հատորով, Երևան, 1974, 1976, 1979), որի շատ բաժիններ հեղինակել է Հենց ինքը՝ Ա. Աբրահամյանը: Բաժնի աշխատանքների մասին խոսելիս չենք կարող չհիշատակել ևս մի հույժ կարևոր հետազոտություն՝ «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» (Երևան, 1973), որտեղ ամենայն մանրակրկիտությամբ քննված և հանրադրված է բերված ժամանակակից հայոց լեզվի զարգացման խորհրդային շրջանի կեսդարյա պատմությունը: Նա գիրքը խմբագրել է Գ. Աևակի հետ, իսկ ներածությունը դրել է անձամբ ինքը:

Ա. Աբրահամյանի գիտական ու մանկավարժական գործունեությունը մասին խոսելիս չի կարելի չանդրադառնալ նաև մեկ այլ կարևոր ոլորտի: Ինչպես հայտնի է, մի 10-12 տարի առաջ մեր երկրի ու արտերկրի անհեռատես, գիտությունից ու պատմությունից հեռու կանգնած որոշ գիտուններ մեր լեզվի արդի ուղղագրության և Հենց դրական արևելահայերի դեմ սկսեցին մի արշավանք, որը շարունակվում է մինչև հիմա: Սուտ ու պատիր փաստարկներով, կեղծ հայրենասիրական ու ամբոխավարական փուչ կոչերով նրանք պահանջում են փոխել մեր ուղղագրությունը, նույնիսկ լեզուն: Ինչպես և սպասելի էր, Ա. Աբրահամյանը անտարբեր չմնաց և այս հարցում: Իր հոգիվածներով ու հրապարակային ելույթներով նա ավելորդ անդամ հիմնավորեց նոր ուղղագրության դեմ կատարվող ամեն մի ոտնձգության սնանկությունը և մնաց մեր լեզվի շահերի, նրա մաքրության ու անաղարտության համար մղվող պայքարի առաջամարտիկներին շարքում:

Վերջին դժվարին տարիներին, երբ առանձին մտավորականներ հայտնվել էին շուկայական հարաբերությունների շահավետ ոլորտներում, Ս. Աբրահամյանը անխախտ կերպով պահպանեց ազնիվ քաղաքացու, իսկական հայ գիտնականի արժանավայել կեցվածքը և սկզբունքային դիր-

քերից հետևողականորեն պաշտպանեց ու պաշտպանում է կործանման աստիճանի վտանգված մեր գպրոցի, մեր մայրենի լեզվի շահերը:

Այժմ նա, ի թիվս գիտական ու հասարակական այլ աշխատանքների, գործուն մասնակցություն է ցուցաբերում ՀՀ Լեզվի պետական տեսչության հայոց լեզվի բարձրագույն խորհրդի գործունեությունը:

Ամփոփենք: Անցած ու ներկա իշխանություններն ըստ պատշաճի գնահատել են լեզվարանի գիտական ու մանկավարժական բեղմնավոր աշխատանքը՝ արժանացնելով նրան շատ շնորհակալագրերի, պատվոգրերի, այլ պարգևների, որոնցից ամենաթանկն ու սրտամոտը ինքը համարում է լուսավորության նախարարության շնորհած՝ Խաչատուր Աբովյանի անվան մեդալը՝ հատկապես գպրոցին մատուցած մեծ ծառայությունների համար: Չենք առարկում: Սակայն չենք կարող չնշել նաև, որ մեր խորին համոզմամբ՝ նրա վաստակը համակշռող, նույնքան թանկ պարգև են և այն անթաքույց հարգանքն ու խոր սիրո զգացումը, որ տածում են նրա նկատմամբ նրան քիչ թե շատ ճանաչողները, իր հին ու նոր ուսանողները, հանրապետության ուսուցիչները, ընդհանրապես գիտական լայն հասարակայնությունը:

Արգեն շուրջ հինգ տասնամյակ է, ինչ Աերգեյ Աբրահամյանը, հարստացած տարիների իմաստնությունը, անսահման սիրով ու անմնացորդ նվիրումով ծառայում է հայերենագիտությանը, հայոց լեզվարանությունը: Մաղթենք անվանի լեզվաբանին, ազնիվ մարդուն ու քաղաքացուն հոգու արիություն, քաջաոողջություն, երկար տարիների կյանք, անկատար մնացած ծրագրերի իրականացում:

ԱՐՏԱՇԵՍ ՊԱՊՈՅԱՆ